

ԼՈՒՌ ՑԱՒԵՐ...

Գետաշէնն ու Մարտունաշէնը աւերուած են, տեղահանուած՝ կոտորածէ փրկուած բնակչութեան մնացորդացը:

Լախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան կը դիմէ Սովետական Միութեան Գերագոյն խորհուրդին՝ պահանջելով արտակարգ նրատաշրջան, ստանալու համար Արցախի հարցին քաղաքական քննարկման մերժումը... Ապա, Գորբաչովի սա պատասխանը՝ կոտորածներու մասին՝

«Չայկական կողմը պայն կը կոչէ տեղահանութիւն, իսկ միւս կողմը՝ կեդրոնական իշխանութիւններէն կը խնդրէ օգնել բնակչութեան հեռացման աշխատանքներուն...»:

Ամերիկայի պետական քարտուղարութիւնը «խորապէս մտահոգուած է «հայ-ադրբեջանական բախումներով», կը ցաւի մարդկային զոհերուն համար եւ կը թելադրէ «երկխօսութիւն» Չայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Շնորհակալ ենք: Միայն պէտք է յիշեցնել, թէ Այապ Մութալիբով մերժած է քանակութեան սեղանին նստիլ՝ Չայաստանի նախագահին հետ:

Ցաւցնող է պետական քարտուղարութեան փոխբանքեր Ռիչըրդ Բուշըրի պատասխանը.

«Ինչ կը վերաբերի Չայաստանի ընդհանուր կայութեան, կը խորհիմ, թէ պէտք է սկսիմ յայտնելով, որ մենք ինն գետնի վըրայ մարդ չունինք, առաջին կարգի տեղեկութիւն չունինք շրջանէն, հետեւաբար, չեմ կրնար հաստատել սովետական պօքքերու յստակ նպատակները, կամ՝ թէ իսկապէս ի՞նչ կ'ընեն ինն:» Եւայն, եւայն...

Լրտես արբանեակները մեզի համար չեն...

Անցեալ տարուան օգոստոս 23-ի Չաչակագիրով վարդագոյն յոյսերու ժամանակները վաղուց անցած են եւ Չայաստանի ներկայ իշխանութիւնները կը դիմագրաւեն ոչ միայն կեդրոնական իշխանութեան գործիները, այլեւ ներքին պառակտումի որդերը սկսած են հասնիլ մեր բջիջներուն, ներքնապէս մեզ հիւծելու համար:

Չայրենի իշխանութիւնները վատաբանելու, ստորագնահատելու, վարկաբեկելու ռազմավարութիւնը ինչո՞վ կրնար նպաստել հայրենիքի վերականգնումի աշխատանքներուն, բացի բաժան-բաժան ընելէ շարքերը, տկարացնելէ դիմադրականութեան ոգին եւ գետին պատրաստելու յեղաշրջման մը...: Իշխանութեան հասնիլ է մեր գերագոյն նպատակը, երբ ահագնացած հարցերու լուծման օժանդակելու փոխարէն ներքին որ բարդութիւններ կը ստեղծենք իշխանութեան առջեւ: Այսօրուան հրամայականը մեզմէ կը պահանջէ ոչ թէ վարկաբեկումը հայրենի իշխանութեան՝ երբ թշնամին դրան սեմին է, այլ ամրապնդումը ներքին միասնականութեան: Իսկ ի՞նչ ըրին ոմանք: Մէկ Բաքուի, մէկ Անկարայի վրայ «գրաւ դըրած» ի ամբաստանութեան տակ առին Չայաստանի Գերագոյն խորհուրդն ու անոր նախագահը՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը, եւ մէկ ալ հայրենի իշխանութիւնները ներկայացուցին Արցախի հարցը ուրապող-մոռացողներ...

Ո՞վ է այսօր Արցախի դատին պաշտպանը: Լեւոն Տէր-Պետրոսեանը, թէ անոնք՝ որոնք Գետաշէնի ու Մարտունաշէնի ինքնապաշտպանութեան մարտերը կը փորձեն կուսակցականացնել, ուռուցիկ յայտարարութիւններով, թշնամիին առիթ տալով փաստարկելու, թէ... խռովարարներ կը միջամտեն մեր ներքին գործերուն: Ե՞րբ պիտի քաղաքական հասունութիւնը ունենանք, ազգային գերագոյն եւ հեռակայ նպատակները վեր դասելու կուսակցական այսօրուան շահերէն եւ նեղը շղնելու արդէն իսկ նեղ կայութեան մատնուած Չայաստանի իշխանութիւնները: Տակաւին շշորցած մեր սուրբ հերոսներուն արիւնը, արդէն կը յոխորտանք անոնց կուսակցական պատկանելիութեամբ մինչ անոնց նահատակութիւնը ԱԶԳԱՅԻՆ նահատակութիւն մըն է եւ հող ալ է մեծութիւնը:

Չայրենի իշխանութիւնները, գիտակցելով ներկայ իրավիճակի բարդութեան եւ Չայաստանի ազգուս պայմաններուն, կը փորձեն խոհեմ եւ իմաստուն քաղաքականութեամբ մը առճակատման հաւանականութիւնները մեղմել, մինչ ոմանք սնապարծ յոխորտանքով մը արար աշխարհին առջեւ կը կատարեն վնասակար արտայայտութիւններ: Որքան իրաւացի է փոխնախագահ Բաբկէն Արարբեյեան, երբ Փարիզի մէջ այդ յոխորտանքները կ'որակէ «անհեթեթ յայտարարութիւններ»:

Լալու եւ ողբալու համար կրնայ ուշ ըլլալ, երբ արտաքին եւ ներքին ճնշումներու տակ տապալի այս իշխանութիւնն ալ, մինչ գալիքին սեւ ուրուականն է որ կ'երեւի հորիզոնին վրայ:

Եթէ չենք ուզեր արժանանալ պատմութեան անէծքին, թող միանան ազգային շարքերը գերագոյն այս իշխանութեան շուրջ, այլապէս, անկախութեան գործընթացը մտած պիտի ըլլայ մութ փապուղիէ մը ներս, երկար ատեն դուրս չգալու համար...